



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

20 ապրիլի 2021 թվական

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/3

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ԸՆԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ԸՆԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու **42** անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, հանրակրթության, իրավաբանական, բնապահպանության, տրանսպորտի, կազմակերպական վարչությունների պետերը, երիտասարդության հարցերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի **31**-րդ հոդվածի **5**-րդ մասով՝ Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Դավիթ Խաչատրյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին:

Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի **2021** թվականի մարտի **22**-ի **հ.29** արձանագրության՝ Երևանի ավագանու Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ Դավիթ Խաչատրյանի մանդատը տրվել է Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Աննա Պապյանին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղակացրեց, որ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով՝ Երևանի ավագանու **20.04.2021**թ. նիստի օրակարգի նախագծի **11**-րդ՝ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» (Դավիթ Անհաղթի **հ.6** հասցե) հարցը հանում է քննարկումից:

Երևանի ավագանու անդամ Էոնեստ Ավանեսովն առաջարկեց Երևանի ավագանու **20.04.2021**թ. նիստի օրակարգի նախագծի **16**-րդ հարցը՝ «Աղվան Աշոտի Չատինյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» ավագանու որոշման նախագիծը քննարկել որպես օրակարգի նախագծի **2**-րդ հարց:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **36** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **34**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **2**

Առաջարկն ընդունվեց:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու **2021** թվականի ապրիլի **20**-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի **3**-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Աղվան Աշոտի Չատինյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի **N310**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի **N310**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
7. Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը միանալու մասին:
8. Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:
9. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
10. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
11. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
12. Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի **N315**-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:
13. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:
14. «Բենտոն Գրուպ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
15. «ԷՍՁԻԱՅ ԻՆՎԵՍՏ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
16. «Երևանի **հ.49** հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:
17. «Երևանի **հ.87** միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու **6**-րդ նստաշրջանի **3**-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **36** անդամ  
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **36**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվեց միաձայն

**2. ԼՍԵՑԻՆ** - Աղվան Աշոտի Չատինյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի պաշտոնակատար Լևոն Ջուլֆալյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Հակոբ Մելիքյանը տեղեկացրեց, որ «Աղվան Աշոտի Չատինյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Հայ լեռնագնաց, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող, ՀԱՕԿ-ի պատվավոր անդամ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պրոֆեսոր, ԽՍՀՄ «Պատվավոր լեռնափրկարար» Աղվան Աշոտի Չատինյանին **60** և ավել տարի մարզամանկավարժական գործունեություն ծավալելու կապակցությամբ, սերունդներ կրթելու, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում ունեցած մեծ ավանդի, երկարամյա անբասիր աշխատանքով Երևանի մարզական գործունեության, լեռնագնացության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և հայկական սպորտի զարգացմանն ուղղված բեղմնավոր գործունեության համար շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու **44** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ **40**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **2**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**3. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՅԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Գայանե Վարդանյան-Երևանի ավագանու ԻՄ ՔՍԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի հունիսի **16**-ի **N16**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» **N10** որոշման **N1** և **N2** հավելվածներում ուժը կորցրած ճանաչել «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «**3.**Սոցիալական աջակցության տարածքային բաժիններ» գլուխը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու **42** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ **40**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**4. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի **N310**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՅԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի

23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արմեն Ներսիսյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N310-Ն որոշման NN 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-6 հավելվածների:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 41 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

5. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 310-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 39 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

6. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու անդամ

2. Էռնեստ Ավանեսով - Երևանի ավագանու անդամ

3. Տիգրան Գալստյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը, քաղաքապետի խորհրդական Դ.Ճգնավորյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վ.Բալասյանը, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սեդոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

3. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթներով հանդես եկան Երևանի քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանը և Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10 որոշման որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N 2 հավելվածում`

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը
-	<b>Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն</b>	
1.	վարչության պետ	1
2.	վարչության պետի տեղակալ	2
3.	գլխավոր մասնագետ	4
4.	գործավար	1
	<b>Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային առաջին բաժին</b>	
5.	Բաժնի պետ	1
6.	գլխավոր մասնագետ	4
7.	առաջատար մասնագետ	2
8.	առաջին կարգի մասնագետ	1
	<b>Քաղաքաշինական փաստաթղթերի ձևակերպման տարածքային երկրորդ բաժին</b>	
9.	Բաժնի պետ	1
10.	գլխավոր մասնագետ	4
11.	առաջատար մասնագետ	2
12.	առաջին կարգի մասնագետ	1
	<b>Կարգավիճակ չունեցող գույքերի բաժին</b>	
13.	բաժնի պետ	1
14.	գլխավոր մասնագետ	4
15.	առաջատար մասնագետ	5
16.	առաջին կարգի մասնագետ	5

	<b>Համակարգման և տեղեկատվության ապահովման բաժին</b>	
17.	Բաժնի պետ	1
18.	գլխավոր մասնագետ	2
19.	առաջատար մասնագետ	2
20.	առաջին կարգի մասնագետ	4
	<b>Ինժեներական ենթակառուցվածքների բաժին</b>	
21.	բաժնի պետ	1
22.	գլխավոր մասնագետ	2
23.	առաջատար մասնագետ	1
24.	առաջին կարգի մասնագետ	1
	<b>Հնոցագործման և հողատնակազմման տարածքային առաջին բաժին</b>	
25.	բաժնի պետ	1
26.	գլխավոր մասնագետ	4
27.	առաջատար մասնագետ	2
28.	առաջին կարգի մասնագետ	1
	<b>Հնոցագործման և հողատնակազմման տարածքային երկրորդ բաժին</b>	
29.	բաժնի պետ	1
30.	գլխավոր մասնագետ	4
31.	առաջատար մասնագետ	2
32.	առաջին կարգի մասնագետ	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>69</b>

բ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

-	<b>Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին</b>	
1.	բաժնի պետ	1
2.	բաժնի պետի տեղակալ	1
3.	գլխավոր մասնագետ	12
4.	առաջատար մասնագետ	5
5.	առաջին կարգի մասնագետ	1
6.	գործավար	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>21</b>

2. Սույն որոշմամբ նախատեսվող հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշմամբ նախատեսված ամսական պաշտոնային դրույքաչափերին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **39** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **39**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը **14.00**-ին:

**7. ԼՍԵՑԻՆ** - Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը միանալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը միանալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ –1.** Համաձայնություն տալ միանալու Եվրոպական Միության «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **34** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ` **32**, դեմ` **0**, ձեռնպահ` **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**8. ԼՍԵՑԻՆ** - Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ - 1.** Թույլատրել Երևանի քաղաքապետին` Կինոյի զարգացման «Ոսկե Ծիրան» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Մոսկովյան փողոցի **հ.3** հասցեում գտնվող շենքի **1**-ին հարկի **214.9**քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև **2026** թվականի ապրիլի **30**-ը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **35** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ` **31**, դեմ` **1**, ձեռնպահ` **2**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**9. ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները

փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի Արշակունյաց 1-ին նրբանցք հասցեում գտնվող **229.43**քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունները «բնակավայրերի» կատեգորիայի հողերից փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին **10**-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **34** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **34**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**10. ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի Աճառյան փողոցի **հ.40/34** հասցեում գտնվող «ՏՈՏԵՄ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող **1.204686** հա և **0.324736** հա մակերեսներով և վարձակալության իրավունքով տրամադրված **0.310597** հա և **0.104663** հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին **10**-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **34** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **28**, դեմ՝ **1**, ձեռնպահ՝ **5**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**11. ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:



Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Տիգրան Գալստյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ **Ն. Մարությունը:**

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի Արդության փողոցի **հ.10** հասցեում գտնվող **4.362115** հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» նպատակային նշանակության կատեգորիայի հոդերից՝ փոխադրել «բնակավայրերի» հոդերի կատեգորիա:

**2.** Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման **1-ին** կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին **10-օրյա** ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **35** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **27**, դեմ՝ **3**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**12. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23-ի** **N315-Ն** որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23-ի** **N315-Ն** որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23-ի** «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման **2021** թվականի ծրագրի վերաբերյալ» **N315-Ն** որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

**1)** Հավելվածի **3-րդ** կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**3.** Գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել, ինչպես նաև ուղղակի ձևով վարձակալության տրամադրվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ՝ բացառությամբ Ծրագրի **4-րդ** կետի, **33-րդ** կետի և **41-րդ** կետի **4-րդ** ենթակետի»,

**2)** հավելվածի **33-րդ** կետը «ուղղակի ձևով» բառերից հետո լրացնել «Երևանի քաղաքապետի կողմից» բառերով,

**3)** Ծրագրի **VI-րդ** գլուխը լրացնել՝ նոր **5-10-րդ** կետերով՝ համաձայն հավելվածի:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **35** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **34**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**13. ԼՍԵՑԻՆ** - Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ **2021** թվականի ընթացքում հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում **2021** թվականի տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **34** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **29**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **5**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**14. ԼՍԵՑԻՆ** - «Բենտոն Գրուպ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտակայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Է. Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ ««Բենտոն Գրուպ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտակայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Թույլատրել «ԲԵՆՍՈՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **36** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **27**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **8**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**15. ԼՍԵՑԻՆ** - «ԷՍՁԻՍՅ ԻՆՎԵՍՏ» ՍՊ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **4** անդամ.

**1.** Հոփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

**2.** Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**3.** Լիլիթ Պիպոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**4.** Մարատ Թոխյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ **2.** Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Է. Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ ««ԷՍՁԻՍՅ ԻՆՎԵՍՏ» ՍՊ ընկերությանը ծառայողական

ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Լևոն Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Թույլատրել «ԷՍԶԻԱՅ-ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 36 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 26, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**16. ԼՍԵՑԻՆ** - «Երևանի հ.49 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնկատար Կարեն Սարգսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևանի հ.49 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. «Երևանի հ.49 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել քանդակագործ-մոնումենտալիստ Արա Արմենի Հարությունյանի անվամբ՝ «Երևանի Արա Հարությունյանի անվան հ.49 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 33 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

**17. ԼՍԵՑԻՆ** - «Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնկատար Կարեն Սարգսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնկատար Կ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Աննա Զավախյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Սերգեյ Գյոզալյան-Երևանի ավագանու անդամ

«Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 114-րդ կետի 2-րդ ենթակետով, Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտարարեց երեսուն րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 17.00-ին:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. «Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել ամերիկահայ բարերարներ Յակոբ և Լուսովիկա Այնթապլեանների անվամբ՝ «Երևանի Յակոբ և Լուսովիկա Այնթապլեանների անվան հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 33 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2021 թվականի մայիսի 25-ին, ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**